



## «Նոր ժամանակի կրթություն» ՀԿ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ  
ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ

### ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Հետազոտության թեման՝ Բնապահպանությունը որպես մարդկության գլխավոր հիմնախնդիր, կրթությունը և դաստիարակությունը դպրոցում

Առարկան՝ Դասվար

ուսուցիչ՝ Լուսինե Հովսեփյան

Ուսումնական հաստատություն՝ Դաշտադեմի Գ. Բաղդասարյանի միջ. դպրոց

*Երևան 2023*

## Բովանդակություն

1. Ներածություն.....	3
2. Էկոլոգիայի հիմնական խնդիրները .....	5
3. Բնագիտության ուսուցումը և բնապահպանական վերաբերմունքի ձևավորումը <<Ես և շրջակա աշխարհը>> առարկայի միջոցով.....	8
4. Հիմնահարց.....Արդյոք էկոլոգիական դաստիարակությունն անհրաժեշտ է դպրոցում	
5. Եզրակացություն.....	15
Օգտագործված գրականության ցանկ.....	17

## Ներածություն

Աշխարհի նկատմամբ բնապահպանական վերաբերմունքը ձևավորվում ու զարգանում է մարդու ամբողջ կյանքի ընթացքում: Բնության և առհասարակ շրջակա միջավայրի հետ համերաշխության ու ներդաշնակության մեջ ապրելու կարողության մշակումը հարկավոր է սկսել հնարավորինս վաղ մանկությունից: Հայտնի է նաև, որ իսկական գեղեցկությունը թաքնված է բնության մեջ: Խնդիրն այն է, որ անհրաժեշտ է օգնել երեխաներին տեսնելու և գնահատելու այն: Բնությունը մարդուն հարստացնում է հոգեպես: Նրա հետ շփումը նպաստում է բարոյական դրական որակների ձևավորմանը:

Երեխաներին գեղեցիկը տեսնել սովորեցնելը ինքնին բարդ գործընթաց է: Նրանք մեծահասակների բառերի, տրամադրության և գործերի հանդեպ չափազանց ուշադիր և զգայուն են այդ պատճառով նրանց պետք է հանգեցնել աշխարհայացքային հետևությունների. Բնության բազմազանության և միասնության, ամենատարբեր առարկաների միջև կապերի ու փոխհարաբերությունների, բնության և նրա զարգացման մեջ մշտական փոփոխությունների, կենդանի էակների միջև նպատակահարմար փոխհարաբերությունների, բնության իսելամիտ օգտագործման և պահպանման դրույթներին:

Տարրական դասարաններում ներդրվել է «Ես և շրջակա աշխարհը» առարկան, որտեղ բացի բնությունից ներառված են աշխարհաճանաչողության տարբեր բնագավառի տարրական գիտելիքներ:

<<Ես և շրջակա աշխարհը>> առարկայի նպատակն է սովորողների մեջ ձևավորել շրջապատի նկատմամբ ուշադիր լինելու, հետազոտելու, խնամելու, պահպանելու, բարեկարգելու կարողությունը, նպաստել հաղորդակցվելու, համագործակցելու, շրջապատող մարդկանց նկատմամբ հարգալից լինելու կարողությունների

ձևավորմանն ու զարգացմանը, որը կոչված է ապահովելու հանրակրթական դպրոցի հետագա աստիճաններում սովորողների առավել հիմնարար գիտելիքները հումանիտար, բնագիտական առարկաներից: Այդ տեսանկյունից տարրական դպրոցում հարկավոր է ստեղծել այն հիմքերը, որոնք հետագայում արդյունավետ կդարձնեն ուսուցումը:

Բնապահպանական կրթությունը նպաստում է երեխայի բնապահպանական գիտակցության և մտածելակերպի ձևավորմանը: Աշակերտի մեջ ձևավորվում է բնության հետ ներդաշնակ կենսահաստատում և պատասխանատվություն բնության հանդեպ: Մարդը ինչպես բնության օգտագործողն է, այնպես էլ դրա պահպանողը: Հարկավոր է հնարավորինս խնայողաբար օգտագործել բնությունը՝ մտածելով ապագայի մասին: Անհրաժեշտ է երեխային սովորեցնել գնահատել բնության գեղեցկությունը:

Առողջ և մաքուր շրջակա միջավայր ունենալու խնդրով շահագրգռված են բոլորը: Ուստի բնապահպանական խնդիրները վերաբերում են բոլորին:

<< Ես և շրջակա աշխարհը >> առարկայի միջոցով կրտսեր դպրոցականների մոտ ձևավորվում և ամրակայվում են մարդու հիմնարար արժեքներն ու նորմերը, որոնք էլ հետագայում բնության և շրջապատի նկատմամբ ճիշտ վարքագծի հիմք են դառնալու:

Երեխան՝ ինքն էլ լինելով բնության մի մասնիկը, պետք է կարողանա իրականացնել բնապահպանական առանձին խնդիրներ: Կարևորվում է երեխաների շփումները բնության հետ, շրջակա միջավայրի նկատմամբ ճիշտ մոտեցման և բնության հանդեպ դրական վարքագծի ձևավորումը:

Կրտսեր դպրոցում հատուկ ուշադրություն պետք է դարձնել սովորողներին հիմնական դպրոցում ուսումնառության նախապատրաստելուն, ինչպես նաև անձի ընդհանուր կարողությունների, անհատական որակների զարգացմանը:

## **Էկոլոգիայի հիմնական խնդիրները**

Էկելեգիան գիտություն է, որը ուսումնասիրում է , թե անընդհատ փոփոխվող պայմաններում ինչպես են գոյատևում բույսերը, կենդանիները, սնկերը, բակտերիաները և տարբեր տեսակի օրգանիզմներն երկրի վրա:

Ժամանակակից էկոլոգիայում խնդիրները շատ բազմազան են կախված կլիմայի փոփոխության և մարդածին գորշոնի, մարդկային թվի ավելացման հետ:

Էկոլոգիայի կարևոր խնդիրներն են՝ օդային ավազանի աղտոտումը, մարդածին աղտոտումը, կենդանիների բազմազանության պահպանումը, բույսերի բազմազանության պահպանումը, ջրային ռեսուրսները և դրանց խնդիրները:

### **1. Օդային ավազանի աղտոտման պատճառները և էկոլոգիական խնդիրները**

Արեգակի ճառագայթները, երկրի մթնոլորտը մեր մոլորակի վրա ապահովում են կյանքի համար անհրաժեշտ կլիման: Սակայն առանձին վայրերում՝ հատկապես արդյունաբերական քաղաքներում օդ է արտանետվում ոչ պիտանի, վնասակար

նյութեր, թունավոր գազեր և այլն: Օդի ախտոտման առավել աննպաստ հետևանքներից է են ջերմոցային էֆեկտը, թթվային անձրևները, ծխածածկույթը:

Մթնոլորտ արտանետած գազերը, փոշին և մուրը ջրային գոլորշիների վրա առաջացնում են կայուն համակարգեր, միացություններ, հեղձուցիչ մառախուղ, որը մեծ քաղաքների համար չարիք է: Դրված է անթափոն, էկոլոգիապես մաքուր արտադրության հիմնախնդիր: Այդ նպատակով գործարաններում տեղադրվում են գոխչներ, մեքենաների շարժիչներում՝ կատալիզատորներ՝ այրումը լրիվ կատարելու համար և այլն:

## 2. Բնական միջավայրի մարդածին աղտոտումը

Ախտոտման ամենատարածված աղբյուրներն են՝ արդյունաբերությունը, ավտոմոբիլային տրանսպորտը, շինարարությունը, հանքարդյունաբերական ձեռնարկությունները:

Բնական միջավայրի աղտոտման տեսակներն են՝ մարդածին և բնական:

Մարդածին աղտոտումը բաժանվում է երեք խմբի՝ կենսաբանական, մեխանիկական, քիմիական: Կենսաբանական աղտոտման պատճառներն են՝ աղտածին բակտերիաները, սնկերը, կապտականաչ ջրիմուռները և մարդու համար վտանգավոր նյութերը: Մեխանիկական աղտոտման պատճառներն են՝ փոշին, ակերոզոլ կենցաղային թափոնները: Քիմիական աղտոտման պատճառներն են՝ բոլոր տեսակի քիմիական տարրերն ու միացությունները, որոնք միջավայրի հետ փոխազդեցության մեջ են մտնում:

Բնական աղտոտման պատճառներն են՝ հրաբխային ժայթքումները երկրաշարժերը և այլ բնական աղետներ:

### **3. Կենդանիների և բույսերի բազմազանության պահպանությունը**

Կենդանիների և բույսերի բազմազանության պահպանությունը նույնպես էկոլոգիական խնդիրներից է: Կենդանիների պահպանման նպատակով ստեղծվել են արգելոցներ, արգելավայրեր և ազգային պարկեր: Երկրագնդի բուսական ռեսուսների կազմում առանձնահատուկ տեղ է գրավում անտառների պահպանությունը: Աշխարհի երկրների մեծ մասում տեղի է ունենում անտառների անխնահ շահագործում, ոչնչացում: Այդ պատճառով անտառային տարածքները տարեցտարի պակասում են: անտառապատ տարածքների կրճատման հետևանքով պակասում է թթվածինը, ավելանում է ածխաթթու գազի քանակը և տեղի է ունենում կլիմայի տաքացում:

## **Բնագիտության ուսուցումը և բնապահպանական վերաբերմունքի ձևավորումը <<Ես և շրջակա աշխարհը>> առարկայի միջոցով**

Բնապահպանական դաժան աղետների ներկա պայմաններում, որոնց հաղթահարումը միայն կարող է ապահովել մարդկային կյանքը երկրագնդի վրա, մարդու բարոյական կրթության ու դաստիարակության հիմքն առաջին հերթին դառնում է մարդու և մարդու, մարդու և բնության միջև առկա փոխհարաբերությունների սկզբունքների մշակումը: Այդ առումով էլ կրտսեր դպրոցականների բնապահպանական կրթությունն ու դաստիարակությունը խիստ կարևոր նշանակություն են ձեռք բերում:

Ուսումնասիրությունները ցույց են տվել, որ բնապահպանական դաստիարակությունն իր մեջ ներառում է բազմաթիվ դիտանկյուններ:

Դրանցից են՝

- բնապահպանական խնդիրների և դրանց լուծման միջոցների իմացությունը
- մտածողական և գործնական կարողությունների համակարգի ձևավորում՝ շրջակա միջավայրի վիճակի ուսումնասիրման, գնահատման և բարելավման առումով
- բնապահպանական բնույթի արժեքային կողմնորոշումների դաստիարակություն
- նպատակահարմար գործունեության և վարքի դրդապատճառների, պահանջմունքների ու սովորույթների ձևավորում
- շրջակա միջավայրի պահպանության գործնական նպատակամիտվածություն և ձգտում:

Պետք է չանտեսել նաև բնապահպանական դաստիարակության մարդասիրական դիտանկյունը:



Դպրոցի առջև ծառայած կարևորագույն խնդիրներից է նաև կրտսեր դպրոցականների բնապահպանական գիտակցության համապատասխան մշակույթի ձևավորումը:

Սկսած <<Ես և շրջակա աշխարհը>> առարկայի առաջին դասից՝ կապ է ստեղծվում հասարակության և բնության միջև, որը դառնում է անբաժանելի օրգանական ամբողջություն, իսկ ինքը՝ սովորողը, այդ ամբողջության մի մասնիկը: Սա հնարավորություն է տալիս վաղ հասակից ստեղծել մանկական ամբողջական բարոյական և էկոլոգիական գաղափարներով անհատ, որը պատկերացնում է մարդու ազդեցությունը շրջակա միջավայրի հանդեպ՝ թե՛ դրական և թե՛ բացասական իմաստով:

Դասընթացի օգնությամբ սովորողը սկսում է <<կառուցել>> իր սեփական աշխարհը՝ գծելով իր պատկերացումների, զգացողությունների, մտքերի և նախասիրությունների շրջանակը: Թեմաներն ընտրված են այնպես, որ սովորողների մեջ քայլ առ քայլ ձևավորվի այն գիտակցությունը, որ ինքն աշխարհում մենակ չէ, որ իր սեփական ցանկություններից ու երազներից այն կողմ կան ուրիշ մարդիկ, որոնք իրեն նման չեն, և, ինչպես ինքը, անկրկնելի անհատականություն են, ուստի նույնպես արժանի են հարգանքի:

Բնապահպանական կրթության նպատակն է զարգացնել պատասխանատու վերաբերմունք շրջակա միջավայրի նկատմամբ, որի կառուցվածքի հիմքը բնապահպանական գիտակցության զարգացումն է: Սա ենթադրում է, որ բարոյական և բնապահպանական սկզբունքները բնության կառավարման և խթանման գաղափարների օպտիմալացման, ակտիվ ուսումնասիրության արդյունք է: Ճիշտ օգտագործելով տարբեր ուսուցման մեթոդներ՝ դաստիարակում ենք էկոլոգիապես գրագետ և ազնվաբարո մարդ :

Նպատակը բնապահպանական կրթությունն է, որի ուսուցման ժամանակ առաջ են քաշվում հետևյալ խնդիրները՝

## 1. կրթական

Գտնել համակարգի բնապահպանական խնդիրների մասին և առաջադրել արդի լուծման ճանապարհներ, ձևավորել էկոլոգիապես ձայնային վարքի ու գործունեությամբ և առողջ ապրելակերպով անհատ,

## 2. զարգացող

զարգացման մտավոր և գործնական հմտությունների ուսուցում, միջավայրի գնահատում և բարելավում, ձգտում ակտիվ աշխատանքի և շրջակա միջավայրի պաշտպանության զարգացման համար:

3. Խելացի (կարողանալ վերլուծել բնապահպանական իրավիճակներ), հուզական (վերաբերմունքը բնության հանդեպ՝ որպես համամարդկային արժեք), բարոյական (կամքն ու հաստատակամությունը, պատասխանատվությունը):

Կազմակերպման յուրաքանչյուր ձև սովորողների հետ ուսուցման գործընթացում խթան է հանդիսանում, զարգացնում տարբեր տեսակի ճանաչողական գործունեություններ: Այլ աղբյուրներից տեղեկությունները թույլ են տալիս կուտակել և բացահայտել խնդրի էությունը, ստեղծականությունը, թույլ են տալիս, որպեսզի անհատը իրական ներդրում ունենա ուսումնասիրության և էկոհամակարգերի խթանման գործընթացում:

Բնապահպանական հայեցակարգի ձևավորումը դպրոցներում, սովորողների մոտ «Մարդը և աշխարհը» գաղափարախոսության մեջ տալիս է ուժեղացված էկոլոգիական հասկացություններ, հստակեցնում է զգալի թվով վառ ու մատչելի օրինակներով: Սկսած «Ես և շրջակա աշխարհը» առարկայի առաջին դասից՝ կապ է ստեղծվում հասարակության և բնության միջև, որը դառնում է

անբաժանելի օրգանական ամբողջություն, իսկ ինքը՝ սովորողը, այդ ամբողջության մի մասնիկը: Սա հնարավորություն է տալիս վաղ հասակից ստեղծել մանկական ամբողջական բարոյական և էկոլոգիական գաղափարներով անհատ, որը պատկերացնում է մարդու ազդեցությունը շրջակա միջավայրի հանդեպ՝ թե՛ դրական և թե՛ բացասական իմաստով:

Երեխաները ստանում են հատուկ գիտելիքներ բույսերի և կենդանիների մասին: Սովորողների համար մատչելի կերպով պետք է բացահայտվեն հակասությունները առկա հասարակության և բնության միջև:

Սովորողներին պետք է ծանոթացնել իրական բնապահպանության առջև ծառայած խնդիրներին:

Ուսումնասիրելով «Էկոլոգիա» առարկան իր խորությամբ՝ անհրաժեշտ է զարգացնել միջառարկայական կապը կենսաբանություն և աշխարհագրություն առարկաների միջև, տալ ճիշտ ձևակերպում բնապահպանության, էկոլոգիական շղթայի (պարենային կապը օրգանիզմների), բնապահպանական, էկոլոգիական աղետների մասին:

Էկոլոգիական կրթության **բովանդակությունը** նպաստում է երեխայի մեջ մարդու՝ որպես բնության մի մասնիկի պատկերացման և երկրի վրա կյանքի ձևերի նկատմամբ հարգալից և հոգատար վերաբերմունքի ձևավորմանը: Մարդասիրական ուղղվածությամբ կրթության բովանդակությունը նպաստում է երեխայի կողմից բնության գեղագիտական ընկալմանը, արտաքին աշխարհի հետ ներդաշնակ ապրելուցանկությունը:

**Կանխատեսելիության սկզբունքը** ենթադրում է, որ կրտսեր դպրոցում իրականացվող էկոլոգիական կրթության արդյունքում երեխաների մեջ ձևավորվում են տարրական պատկերացումներ բնության մեջ գոյություն ունեցող կապերի մասին, և այդ պատկերացումների հիման վրա զարգանում են նրանց կողմից իրենց գործողությունների կանխատեսման կարողությունները:

**Գործնականության սկզբունքը.** Երեխայի էկոլոգիական գիտելիքները դառնում են շրջակա միջավայրի պահպանմանն ուղղված երեխային հասանելի գործունեության դրդապատճառների ձևավորման հիմքը: :

**Միասնականացման (ինտեգրացիայի) սկզբունքը.** ուսումնասիրությունները ցույց են տվել, որ էկոլոգիական կրթության հիմնական միտումը գիտելիքների միասնականացումն է: Բհարկե, ներկա ժամանակահատվածում այս սկզբունքն առավել ակտիվ է իրականացվում դպրոցական կրթության մեջ:

Շրջակա միջավայրի շփումների տեսակետից բնապահպանական-գեղագիտական դաստիարակության լայն հնարավորություններ է ընձեռում հատկապես դիդակտիկ խաղերը:

Բնությանն առնչվող հարցերը հաճախ խրթին և անբացատրելի են թվում երեխային, քանի որ նա դրա մասին խոսելու առիթ գրեթե չի ունենում: Մինչդեռ խաղային իրավիճակներում հնարավորություն է ստեղծվում մտածել, արտահայտել միտքը, կարելորել իր անձը, լսել այլ մեկնաբանություններ, ուսումնասիրել տարբեր երեկույթներ ու առարկաներ: Այդ կերպ ձևավորվում է կյանքի նկատմամբ սեփական դիրքորոշումը:

Խաղերը և վարժանքները նպաստում են երեխաների դիտողականության, միմյանց և բնության հետ ներդաշնակ շփվելու ու հաղորդակցվելու, փոխօգնության ու համագործակցության կարողությունների զարգացմանը: Դրանց միջոցով ընդլայնվում է երեխայի աշխարհընկալումը, հասրտանում է երևակայությունը, հղկվում է ներըմբռողականությունը, դաստիարակվում են բարոյական հատկանիշներ, ձևավորվում և զարգանում են նրբանկատություն, ճարպկություն, աչքաչափ, արագ կողմնորոշում: Խաղային գործունեությունը հնարավորություն է ընձեռում ուսումնասիրել տարբեր երևույթներ ու առարկաներ:

Ամենակարևորն այն է, որ հենց խաղի ընթացքում են ձևավորվում ուսումնական գործունեության համար բարենպաստ միջավայր և միմյանց հանդեպ հանդուրժողականության մթնոլորտ:

Դիմելով պատմության օգնությանը (հասարակություն-բնություն ներդաշնակ փոխազդեցությունը տեսականորեն հիմնավորելու համար), ուսուցիչը ներկայացնում է գիտական պատճառներ բնությունը պահպանելու, ինչպես կոնկրետ երկրի, այնպես էլ աշխարհի մակարդակով: Իմացական գործունեությունը խթանում են այնպիսի իրավիճակներ, երբ անհրաժեշտ է բարոյական որոշում կատարել, և այդ իրավիճակները նպաստում են սովորողների արժեհամակարգի ձևավորմանը: Ակտիվանում է նաև ձգտումը՝ գեղագիտական զգացմունքները ստեղծագործական միջոցներով արտահայտելու (նկարչության, բանաստեղծության միջոցով): Արվեստին բնորոշ սինթետիկ մոտեցումը և զգայականությունը դեպի իրականությունը հատկապես կարևոր են բնության պահպանման շարժառիթները զարգացնելու համար: Անհրաժեշտ է նաև ուսուցանել ամենահարմար մեթոդները՝ վերլուծելու և կարևորելու բնապահպանական արժեքները, շահերն ու կարիքները, նկարչության փորձերի և բնապահպանական դիտարկումների, դասավանդողի հետզրույցների, փաստերի, գործիչների կարծիքների միջև համեմատություն անցկացնելով՝ կառուցել սեփական վերաբերմունք խնդիրների նկատմամբ:

Բնապահպանական ուղղվածություն սովորող ոչ ավանդական դասաժամերի կազմակերպման ձևերի թվում են դասը որպես տոն և թեմատիկ դասերը («Անտառի տոն», «Ծառի ու ծաղկի տոն», «Պահպանիր բնությունը» միջոցառումներ): Այսպիսի դասերը սովորողների մեջ ձևավորում են ակտիվ քաղաքացիական դիրքորոշում հայրենի բնության նկատմամբ:

Երեխաներին դուր են գալիս զանազան մրցույթները: Խաղային մրցույթները համադրվում են ճամփորդությունների և արշավների հետ:

Ցածր դասարանի աշակերտները սովորում են խնամել տնային բույսերը, հետազոտում են լանդշաֆտային դիզայնի հնարավորությունները:

Բնապահպանական խնդիրները լուծելիս սովորողներն իրենց անկախ գործունեությամբ որոշակիմեթոդներ են ձեռք բերում, որոնք խրախուսում են նրանց գործունեությունը, նոր գաղափարների շուրջ ծնված լուծումներ ու բացահայտումներ են գտնում, զարգացնում են բանավիճելու մեթոդիկան, որոնք էլ իրենց հերթին նպաստում են անհատական հարաբերությունների ձևավորմանը, սովորողների խնդիրների, տեղական ծանոթ, իրական միջավայրի պայմանների համար հնարավոր լուծումներ որոնելու, գտնելու:

Դասի արդյունավետությունը աճում է մուլտիմեդիային պրեզենտացիաների շնորհիվ, որոնք ուղեկցում են, լուսաբանում ուսուցչի կամ սովորողի բացատրությունները:

<<Ես և շրջակա աշխարհը>> առարկայի մեկ այլ կարևոր առանձնահատկությունն էլ սոցիալական հմտությունների խթանումն է, ակտիվ քաղաքացիական դիրքորոշման և վարքագծի ձևավորումը:

## Եզրակացություն

Դասվարի մանկավարժական հմտությունները կարևոր և նշանակալից դեր ունեն նրա աշխատատեղում: Նա իր աշխատանքի ուրույն ձևերով ու մեթոդներով պետք է ձեռք բերի կրտսեր դպրոցականների վստահությունը, հավատը, աշխատանքի հանդեպ սերը, նվիրումը:

Բնապահպանական խնդիրները լուծելիս սովորողներն իրենց անկախ գործունեությամբ որոշակի մեթոդներ են ձեռք բերում, որոնք խրախուսում են նրանց գործունեությունը, նոր գաղափարների շուրջ ծնված լուծումներ ու բացահայտումներ են գտնում, զարգացնում են բանավիճելու մեթոդիկան, որոնք էլ իրենց հերթին նպաստում են անհատական հարաբերությունների ձևավորմանը, սովորողների խնդիրների, տեղական ծանոթ, իրական միջավայրի պայմանների համար հնարավոր լուծումներ որոնելու, գտնելու: Դասի արդյունավետությունը աճում է մուլտիմեդիային պրեզենտացիաների շնորհիվ, որոնք ուղեկցում են, լուսաբանում ուսուցչի կամ սովորողի բացատրությունները:

Հարկավոր է տեսնել դպրոցներում առկա ռեսուրսները, որոնք կարելի է օգտագործել երեխաների մոտ շրջակա միջավայրի նկատմամբ հատուկ մոտեցում և վերաբերմունք ձևավորելու համար:

Դպրոցների բակերում բավականաչափ մեծ անխնամ հողակտորներ կան, որոնք կարելի է օգտագործել բուսաբանական-բնապահպանական ծրագրեր իրականացնելու համար: Այն կօգնի երեխաներին ճանաչել բնությունը, նրանց մոտ ձևավորել հոգատար վերաբերմունք բնության նկատմամբ: Տարրական և միջին դասարանի երեխաները պետք է սովորեն բույսերի մշակում, այգու խնամք:



Երեխաների աշխարհաճանաչողության ձգտումն ու հետաքրքրասիրությունը հաշվի առնելով՝ սա կարող է դառնալ շատ հաճելի զբաղմունք նրանց համար:  
Երկիցս ճշմարիտ է էոնեստ Հեմինգուեյի այն միտքը, թե մարդը մեծ հրաշալիք է: Կարելի է ավելացնել, որ ուսուցիչն է ամենամեծ հրաշալիքը, որի անձեռակերտ առհավատյաներն են սերնդափոխության հերթագայությամբ մարդկությանը ներկայացված տիտաններն ու հանճարները:



## Օգտագործված գրականության ցանկ

- Նախաշավիղ, ՀՀ ԿԳՆ, ԿԳՆ ԿԱԻ, 4/2014
- Նախաշավիղ, ՀՀ ԿԳՆ, ԿԳՆԿԱԻ, 2-3/2008
- Նախաշավիղ, ՀՀ ԿԳՆ, ԿԳՆԿԱԻ, 1/2003
- Վալեայան Լ. իմբ., Աշխարհագրություն, բնօգտագործում և բնապահպանություն, 9-րդ դասարան, Երևան, 2005
- Գրիգորյան Կ., Եսայան Ա., Ժամհարյան Հ., Էկոլոգիայի և բնության պահպանության հիմունքներ, Երևան, 2010
- Համացանց